1. «Շուշի-Կարմիր Շուկա» 35 կմ էլեկտրահաղորդման գիծ. 177 հենարաններով, «Կարմիր Շուկա» 35/10 ԿՎ ենթակայանի կառուցմամբ եւ «Շուշի» 35/10 ԿՎ ենթակայանի վերակառուցմամբ լուծվել է Շուշիի եւ Մարտունու շրջանների

էներգասնուցման խնդիրը:

2. Շուշի քաղաքում ջրամատակարարման համակարգ է կառուցվել. 13 կմ երկարությամբ ջրատար խողովակաշար, վերակառուցվել է քաղաքը սնուցող Թադեւոսի ջրատարը, վերականգնվել է մաքրման կայանը:

3. Հիմնանորոգվել է Շուշիի ռեալական ուսումնարանը, գրադարանը, երաժշտական դպրոցը,

4. Հիմնվել է Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանը, տրամադրվել են սարքավորումներ և գույք:

5. Վերակառուցվել է Խ. Աբովյանի անվան դպրոցը, մշակույթի և երիտասարդության կենտրոնը,

6. Գիշերօթիկ մանկապարտեզ է կառուցվել,

7. ԱրևայինԱրցախ-վերականգնվող էներգիա 3 շրջաններում՝ Մարտունու, Շուշիի և Ասկերանի շրջաններում տեղադրվել են ջրատաքացուցիչներ՝ համապատասխանաբար 133 և 16 բնակավայրերում,

8. Բնակելի շենքերի տանիքները վարակառուցվել են,

9. Քաղաքի փողոցների վերակառուցում-բարեկարգում. փողոցներն ասֆալտապատվել են, փոխվել են ջրամատակարարման և հեղեղատար կոյուղու խողովակները, վերանորոգվելեն մայթերը:

Թուֆենկյան բարեգործական հիմնադրամը վերանորոգել է Շուշիի ազգագրական թանգարանը: